



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ  
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«25» 06 2021թ.



# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0111-21

**Ձեռնարկողը՝**

«ՄԼ Մայնինգ» ՍՊԸ  
Ք. Երևան, Շիրակի փող. 74/16

**Գործունեությունը՝**

Արաբկիր վարչական շրջան, Ադոնց 19/19 հասցեում  
նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի  
կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ  
Քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պարտականությունները կատարող



Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

թիվ ԲՓ 0 1 1 1 - 2 1

< 25 > 06 2021թ.

**Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջան, Ադոնցի փողոց 19/19 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«ՄԼ Մայնինգ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան

«ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսվում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջան Ադոնցի 19/19 հասցեում կառուցել բազմաբնակարան բնակելի համալիր:

Գործունեությունն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2021թ ապրիլի 19-ի N 01/18-07/1159-Ա ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականներով ամրագրված՝ 0.56318հա, մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7-րդ կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Նախագծվող համալիրի համար տրամադրված հողամասը գտնվում է Երևան քաղաք Արաբկիր վարչական շրջանի Ադոնցի 19/19 հ հողատարածքում և իրենից ներկայացնում է կառուցապատված տարածք: Հողատարածքի տարածքում բնության և պատմամշակութային հուշարձանները, ծառափային բուսականությունը, ջրային ռեսուրսները բացակայում են:



Համաձայն նախնական գնահատման հայտի ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով: Հետազոտության տվյալների համաձայն կառուցապատող տարածքը բարենպաստ է շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Կառուցապատման մակերեսը կազմում է 5631.8մ<sup>2</sup>, որտեղ ներկա դրությամբ առկա են քանդման ենթակա 2 շինություն: Հարակից՝ Ադոնցի փողոց, 19/8 հասցեում իրականացվում են «Ադոնցի 19/8 հասցեում բնակելի համալիրի կառուցում» առաջին փուլի և «Ադոնցի 19/8 հասցեում բնակելի համալիրի կառուցում» երկրորդ փուլի շինարարությունները:

Երրորդ փուլով նախատեսվում է Ադոնց 19/19 հասցեում և իրար նկատմամբ շախմատածել կառուցել երկու մասնաշենքից բաղկացած բազմաբնակարան (H եվ I 16 հարկ հարկայնությամբ) շենքեր՝ միավորված համատեղ ստորգետնյա մեկ և երկու ավտոկայանատեղիներով:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- հողատարածքի ընդհանուր մակերես – 5631.8մ<sup>2</sup>,
- կառուցապատման մակերեսներ – 513.3 մ<sup>2</sup>
- կանաչապատման մակերես – 2258մ<sup>2</sup>,
- բարեկարգման մակերես – 2343.2մ<sup>2</sup>,
- բնակարանների ընդհանուր թիվը – 210 հատ,
- ստորգետնյա ավտոկայանատեղի – 154 ավտոկայանատեղ,
- նախատեսվում է նաև զրուցարան և մանկական խաղահրապարակ:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:

Շահագործման ընթացքում բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տրվող տեխնիկական պայմանի՝ միանալով համայնքային ջրամատակարարման ցանցին: Ջրահեռացումը կիրականացվի տարածքի հարևանությամբ անցնող D = 700 մմ ջրատարից: Շենքերի գազամատակարարումը և էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանների:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինարարական աշխատանքները տևելու են 36 ամիս: Շինարարության ընթացքում օգտագործվելու են մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ վերամբարձ ավտոկոունկ, աշտարակային կոունկ, ավտոբետոնխառնիչ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն: Շինարարական հրապարակի մակերեսը կազմելու է 500մ<sup>2</sup>:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական նյութերից օգտագործվելու են ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և այլն:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են պատրաստի վիճակում բետոնատար ինքնաթափերի միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավեցման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (50 մարդ):

